ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Նոյեմբերի 19-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ խորհրդակցական ժողով՝ Հայաստանի և Արցախի 9 թեմական առաջնորդների՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի, Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանի, Գեղարքունիքի թեմի առաջնորդ Անանիա եպս. Արաքաջյանի, Արմավիրի թեմի առաջնորդ Ասողիկ եպս. Արիստակեսյանի, Արցախի թեմի առաջնորդ Գարգև եպս. Մարտիրոսյանի, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ վրդ. Զուլֆյանի, Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ վրդ. Կճոյանի, Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել վրդ. Քարամյանի, Սյունիքի թեմի առաջնորդ Աբրահամ վրդ. Մկրտչյանի մասնակցությամբ:

Ժողովը բացվեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի խոսքով, որում Նորին Սրբությունը իր գոհունակությունն արտահայտեց ներկա խորհրդակցական մեկօրյա ժողովի կայացման առիթով:

Ժողովն ընթացավ երեք նիստով:

Առաջին նիստի ընթացքում թեմական առաջնորդները մեկ առ մեկ հանդես եկան իրենց թեմերի վարչա-կազմակերպական, հովվական, ծիսական-արարողական, դաստիարակչական և տնտեսական գործունեության և ընդհանուր կացության մասին հաշվետու զեկույցներով:

Երկրորդ նիստում լսեցին Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչական կենտրոնի վարիչ Վազգեն վրդ. Միրզախանյանի ընդարձակ զեկույցը՝ քրիստոնեական դաստիարակության մարզում կատարված աշխատանքների և առաջարկված ծրագրումների մասին:

Որոշվեց, որ քրիստոնեական դաստիարակության աշխատանքը թեմերի նախաձեռնությամբ և Ս. Էջմիածնի աջակցությամբ առավել թափ ստանա և ընթանա ծրագրային հունով: Բոլոր թեմական առաջնորդներին տրամադրվեցին կենտրոնի վերջին հրատարակությունները, մասնավորապես կրոնի դասավանդման երեք դասագրքերը՝ նախատեսված Զ, Է, Ը դասարանների համար: Թեմերի կազմակերպական աշխատանքների համար տրամադրվեց որոշակի բյուջե:

Երրորդ նիստի ընթացքում թեմական առաջնորդների կողմից՝ հոգևոր հովիվների, քահանաների քանակի և որակի վերաբերյալ եղան մի քանի առաջարկներ: Մասնավորաբար ընդգծվեց, որ առանց հատուկ պատրաստության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավանության քահանայական ձեռնադրություններ տեղի չունենան:

Որոշվեց նաև Հայաստանի այլազան շրջաններից, հատուկ դասընթացներին հետևելու նպատակով, հոգևոր Ճեմարան գործուղվեն ուսանողներ, որոնք ավարտելուց հետո վերադառնան և տեղում քահանայագործեն:

Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից կարդադրվեց, որպեսզի արագացվեն և ուժեղացվեն աշխատանքները՝ թեմական-ծիսական մարմինների կազմակերպման և գործունեության աշխուժացման ուղղությամբ:

Բարձր գնահատելով թեմական առաջնորդների գործունեությունը Նորին Սրբությունը առաջարկեց, որպեսզի նման խորհրդակցական ժողովները դումարվեն առավել հաճախակի պարբերականությամբ: